



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 12 Յուլիս 2020

171

DIMANCHE, 12 Juillet 2020



615 Stuart Avenue, Outremont Québec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Չ ԿԻՐԱԿԻ ՉԿՆԻ ՀՈԳԵԳՎԱՍՏԵԱՆ
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՊԱՀՈՑ
SIXIÈME DIMANCHE APRÈS LA PENTECÔTE.
PRÉMIÈRES DU JEÛNE DE LA TRANSFIGURATION**

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵՎԼԻ ՀՈՌՎԱՍՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՅ ՆԱՄԱԿԵՆ
(11.13-24)

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ**
(14.13-21)

Les lectures de la Bible d'aujourd'hui :

ROMAINS

11.13-24

MATTHIEU

14.13-21

Պատարագիչ՝

Հոգեւոր Հովիւ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Հոգեհանգիստ - ուղիղ սփռում -	12:30-ին
Office de Requieme – En direct à	12h30

DIACRES - ACOLYTES

Organist: M Vahram Sargsyan

Choir: Emma et Zara Sargsyan

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՌՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (11.13-24)

Բայց կ'ըսեմ ձեզի՝ հեթանոսներուդ, որովհետեւ հեթանոսներուն առաքեալն եմ, իմ պաշտօնս կը մեծարեմ. Որպէս զի թերեւս իմ մարմինէս եղողներուն նախանձը շարժեմ ու անոնցմէ մէկ քանիները ապրեցնեմ: Վասն զի եթէ անոնց մերժուիլը աշխարհի հաշտութիւն է, հապա անոնց ընդունուիլը ի՞նչ պիտի ըլլայ, եթէ ոչ՝ մեռելներէն կենդանանալ: Արդ՝ եթէ երախայրին սուրբ է, նաեւ զանգուածը եւ եթէ արմատը սուրբ է, ուրեմն ճիւղերն ալ: Եթէ այն ճիւղերէն մէկ քանիները կոտորտեցան ու դուն որ վայրենի ձիթենի էիր՝ անոնց վրայ պատուաստուեցար ու ձիթենիին արմատին եւ պարարտութեանը հաղորդ եղար, ճիւղերուն դէմ մի՛ պարծենար. իսկ եթէ պարծենաս, յիշէ թէ դուն արմատը վեր չես բռներ, հապա արմատը՝ քեզ: Ուրեմն պիտի ըսես՝ «Ճիւղերը կոտորեցան որպէս զի ես պատուաստուիմ»: Աղէ՛կ, անոնք անհաւատութիւնով կոտորեցան ու դուն հաւատքով հաստատուեցար: Մի՛ հպարտանար, հապա վախցիր. Վասն զի եթէ Աստուած բնական ճիւղերուն չիւնայեց, գուցէ քեզի ալ չիւնայէ: Ուստի տե՛ս Աստուծոյ քաղցրութիւնն ու խստութիւնը: Կործանուածներուն վրայ խստութիւնը եւ քու վրադ՝ քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութեան մէջ կենաս, ապա թէ ոչ դուն ալ պիտի կորսուիս: Իսկ անոնք եթէ իրենց անհաւատութեանը մէջ չկենան, պիտի պատուաստուին, վասն զի Աստուած կարող է զանոնք նորէն պատուաստել: Քանզի եթէ դուն քեզի բնական եղող վայրենի ձիթենիին կտորուեցար ու այն բարի ձիթենիին վրայ, որ քեզի բնական չէր, պատուաստուեցար, ալ որչա՛ս փ աւելի անոնք որ բնական ճիւղեր են, պիտի պատուաստուին իրենց ձիթենիին վրայ:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

(14.13-21)

Երբ Յիսուս լսեց, անկէ նաւով անապատ մը գնաց առանձին: Երբ ժողովուրդը լսեց, ոտքով անոր ետեւէն գացին իրենց քաղաքներէն:

Երբ դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ ու անոնց հիւանդները բժշկեց:

Իրիկունը իր աշակերտները եկան ու ըսին. «Հոս անապատ տեղ մըն է եւ ժամանակը ուշացած է. արձակէ ժողովուրդը, որպէս զի գիւղերը երթան ու իրենց կերակուր գնեն»: Յիսուս անոնց ըսաւ. «Հարկ չէ որ ատոնք երթան, դուք սուէք անոնց որ ուտեն»: Անոնք ալ ըսին. «Հոս ուրիշ բան մը չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ»: Ըսաւ անոնց. «Հոս, ինձի բերէք զանոնք»: Եւ հրաման ըրաւ որ ժողովուրդը խոտին վրայ նստեցնեն: Հինգ նկանակը եւ երկու ձուկը առաւ, դէպի երկինք նայելով օրհնեց ու կտրելով նկանակները աշակերտներուն սուաւ եւ աշակերտները՝ ժողովուրդին: Ամէնքը կերան ու կշտացան եւ տասներկու կողով լեցուն աւելցած կտորուանքներ վերցուցին: Անոնք որ կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն եւ սղաքներէն զատ:

ROMAINS

11.13-24

Car je parle à vous, Gentils; certes en tant que je suis Apôtre des Gentils, je rends honorable mon ministère; [Pour voir] si en quelque façon je puis exciter ceux de ma nation à la jalousie, et en sauver quelques-uns. Car si leur rejection est la réconciliation du monde, quelle sera leur réception sinon une vie d'entre les morts? Or si les prémices sont saintes, la masse l'est aussi; et si la racine est sainte, les branches le sont aussi.

Que si quelques-unes des branches ont été retranchées, et si toi qui étais un olivier sauvage, as été enté en leur place, et fait participant de la racine et de la graisse de l'olivier; Ne te glorifie pas contre les branches; car si tu te glorifies, ce n'est pas toi qui portes la racine, mais c'est la racine qui te porte. Mais tu diras : les branches ont été retranchées, afin que j'y fusse enté. C'est bien dit, elles ont été retranchées à cause de leur incrédulité, et tu es debout par la foi : ne

t'élève [donc] point par orgueil, mais crains. Car si Dieu n'a point épargné les branches naturelles, [prends garde] qu'il ne t'épargne point aussi. Considère donc la bonté et la sévérité de Dieu : la sévérité sur ceux qui sont tombés; et la bonté envers toi, si tu persévères en sa bonté : car autrement tu seras aussi coupé. Et eux-mêmes aussi, s'ils ne persistent point dans leur incrédulité, ils seront entés : car Dieu est puissant pour les enter de nouveau. Car si tu as été coupé de l'olivier qui de sa nature était sauvage, et as été enté contre la nature sur l'olivier franc, combien plus ceux qui le sont selon la nature, seront-ils entés sur leur propre olivier?

MATTHIEU

14.13-21

Et Jésus l'ayant entendu se retira de là dans une nacelle, vers un lieu désert, pour y être en particulier ; ce que les troupes ayant appris, elles sortirent des villes [voisines], et le suivirent à pied. Et Jésus étant sorti vit une grande multitude, et il en fut ému de compassion, et guérit leurs malades.

Et comme il se faisait tard, ses Disciples vinrent à lui, et lui dirent : ce lieu est désert, et l'heure est déjà passée ; donne congé à ces troupes, afin qu'elles s'en aillent aux bourgades, et qu'elles achètent des vivres. Mais Jésus leur dit : ils n'ont pas besoin de s'en aller; donnez-leur vous-mêmes à manger. Et ils lui dirent : nous n'avons ici que cinq pains et deux poissons. Et il leur dit : apportez-les-moi ici. Et après avoir commandé aux troupes de s'asseoir sur l'herbe, il prit les cinq pains et les deux poissons, et levant les yeux au ciel, il bénit [Dieu]; puis ayant rompu les pains, il les donna aux Disciples, et les Disciples aux troupes. Et ils en mangèrent tous, et furent rassasiés, et ils remportèrent du reste des pièces de pain douze corbeilles pleines. Or ceux qui avaient mangé étaient environ cinq mille hommes, sans compter les femmes et les petits enfants.





Եւ անոնք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին՝ չհաշուած կանանց եւ երեխաները » (Մատթ. 14:15-21):



Միրելիներ, մեր Տէրը Իր երեք տարուան քարոզչութեանց ընթացքին բազմահարիւր բժշկութիւններու կողքին, քանի մը հրաշքներ կատարեց: Յիշենք Իր առաջին հրաշքը Կանա քաղաքի հարսանիքին ժամանակ, երբ գինին վերջացաւ եւ Իր մօր խընդրանքովը Ան ջուրը գինիի փոխեց, երկրորդը՝ Հայրոսի տասներկուամեայ աղջկան յարութիւնը, երրորդը՝ Իր մեռած բարեկամ Ղազարոսի յարութիւնը, ծովին վրայով քալելը, փոթորիկին հանդարտեցումը եւ այլն:

Աւետարանիչի այս պատմութիւնը Յիսուսի հրաշքներէն մէկն է: Ըստ անոր Բեթսայիդայի անապատին մէջ մէկ օրուայ ընթացքին առաւօտէն մինչև երեկոյ հինգ հազար հոգի հաւաքուած էին լսելու Յիսուսի քարոզութիւնները ու տեսնելու համար Անոր բժշկութիւնները: Ժողովուրդը շտապէն իր հետ ուտելիք չէր վերցուցած: Այս նկատի ունենալով առաքեալները Յիսուսի ուշադրութեան կը յանձնեն եւ կը խնդրեն, որ Ան ժողովուրդին ազատ արձակէ, որպէսզի երթան գիւղերը եւ ուտելու բան կարողնան գնել իրենց համար, քանի որ մօտ էր նաեւ գիշերը:

Յիսուս անոնց կը յորդորէ, որ իրենք կերակրեն ժողովուրդին: Առաքեալները կը զարմանան, որովհետեւ իրենց Վարդապետը շատ լաւ գիտէր, որ իրենք աղքատ էին եւ հնարաւորութիւն չունէին այդքան մարդու ուտելիք ապահովել: Յիսուսի խնդրանքին համաձայն Անոր մօտ կը բերեն հինգ զարիի հաց եւ երկու ձուկ: Մեր Տէրը կը նայի դէպի երկինք, կ'աղօթէ եւ կ'օրհնէ հացն ու ձուկը, որմէ ետք առաքեալներուն կը հրամայէ բաժնել խումբ-խումբ նստած ժողովուրդին:

Աւետարանիչը կ'ըսէ. «Ամէնը կերան ու յագեցան: եւ տասներկու սակառ լիքը կտորտանքներու մնացորդներ աւելցան: Եւ անոնք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին՝ չհաշուած կանանց եւ երեխաները»: Թէ ինչպէս տեղի ունեցաւ հինգ հազար հոգիի ուտելիքով ապահովուիլը հինգ հացով եւ երկու ձկով, չորս Աւետարանիչներուն մօտ բացատրութեան ոչ մէկ բառ չենք գտներ, որպէսզի այդ փաստին վրայ հիմնուելով կարողանանք հրաշքին ձեւը բացատրել:

Ըստ ոմանց Յիսուսի ձեռքին մէջ հացն ու ձուկը երբեք չպակսեցան, այլ քանի անգամ, որ առաքեալները իրենց զամբիւղները դատարկելով Անոր մօտ վերադարձան, միշտ պետք եղածը ստացան Յիսուսէն ու տարին եւ բաժնեցին ժողովուրդին: Ուրիշները կ'ըսեն, թէ առաքեալներուն զամբիւղներուն մէջ դրուած քիչ մը հացը եւ կտոր մը ձուկը բազմացան ու անոնք որքան իրենց ձեռքերը անոնց մէջ մտցուցին, միշտ բաշխելու որեւէ բան մը գտան եւ այլն:

Հաւանականը առաջինն է այն պատճառով, որ Աւետարանի պատմութեան մէջ յիշուած զամբիւղներուն դատարկուիլը, նորէն լեցուիլը եւ ուտելիքի աւելնալը: Հոգեւոր իմաստով հացը այստեղ կը խորհրդանշէ Աստուծոյ խօսքը, որ աստուածային անսպան

սնունդ է իրաքանչիւրիս համար, եթէ լսենք, իրագործենք եւ օգտուինք անկէ:

Յիսուսի հրաշքներուն եւ բժշկութիւններուն նպատակը մէկ էր, մարդոց ցոյց տալ, որ այդ բոլորը կը կատարէ ոչ թէ Իր, այլ միայն Հայր Աստուծոյ փառքին համար:

Մենք ալ իբրեւ Քրիստոսի հետեւողներ, իբրեւ հայ քրիստոնէաներ, պէտք է մեր բոլոր գործերը, նուիրումը, ծառայութիւնը, սերն ու հաւատքը, ամէն ինչ կատարենք միայն Աստուծոյ փառքին համար: Աստուած տուած է կեանք մը, որ Անոր կողմէ մեզի ընծայւած ամենաթանկագին պարգէնն է, կեանք, որ պարտաւոր ենք լեցնելու իմաստութեամբ, արդարութեամբ, բարի, արդար եւ առաքինի գործերով, խոնարհութեամբ ու համեստութեամբ: Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան

"Et ceux qui mangeraient étaient environ cinq mille hommes, sans compter les femmes et les enfants" (Matthieu 14: 15-21).

Bien-aimés, au cours de ses trois années de prédication, notre Seigneur a accompli de nombreux miracles. Son tout premier était au mariage à Cana quand le vin s'est épuisé, et Il a changé l'eau en vin. Cette histoire de l'évangéliste est l'un des miracles de Jésus. Selon lui, cinq mille personnes se sont réunies dans le désert de Bethléem du matin au soir pour écouter les sermons de Jésus et voir sa guérison. Pressés de se rendre sur place, les gens n'ont pas pris de nourriture avec eux. Dans cet esprit, les apôtres tournent leur attention vers Jésus et lui demandent de libérer les gens afin qu'ils puissent aller dans les villages et acheter quelque chose à manger pour eux-mêmes, car la nuit était proche. Jésus les exhorte à nourrir le peuple. Les apôtres étaient étonnés parce que leur Maître savait très bien qu'ils étaient pauvres et n'avaient pas les moyens de nourrir autant de gens. À la demande de Jésus, ils lui ont apporté cinq miches de pain et deux poissons. Notre Seigneur regarde le ciel, prie et bénit le pain et le poisson, après quoi il ordonne aux apôtres de diviser les gens assis en groupes. L'évangéliste dit: "Ils ont tous mangé et étaient satisfaits. Et les restes des douze chars étaient pleins. Et ceux qui ont mangé étaient environ cinq mille, sans compter les femmes et les enfants. Il n'y a pas un seul mot des quatre évangélistes

sur la façon dont il était possible de nourrir cinq mille personnes avec cinq miches de pain et deux poissons que celui de la forme d'un miracle. Selon certains, Jésus n'a jamais perdu de pain et de poisson dans ses mains, mais à plusieurs reprises, lorsque les apôtres ont vidé leurs paniers et sont revenus vers lui, ils ont toujours pris ce dont ils avaient besoin de Jésus l'ont distribué au peuple. D'autres disent qu'un peu de pain et un morceau de poisson ont été placés dans les paniers des apôtres et que peu importe combien ils y mettent la main, ils trouvent toujours quelque chose à distribuer. Dans un sens spirituel, le pain symbolise ici la parole de Dieu, qui est une nourriture divine inépuisable pour chacun de nous, si nous l'écoutons, l'exerçons et l'apprécions. Le but des miracles et des guérisons de Jésus était de montrer aux gens qu'il fait tout cela non pour lui, mais seulement pour la gloire de Dieu le Père. En tant que disciples du Christ, en tant que chrétiens arméniens, nous devons faire tout notre travail, notre dévouement, notre service, notre amour et notre foi, tout uniquement pour la gloire de Dieu. Dieu nous a donné une vie qui est le cadeau le plus précieux qu'il nous ait donné, une expérience que nous devons remplir de bonté, de sagesse, de justice, de droiture, d'humilité, de modestie et d'actes vertueux. Amen

Avec mes bénédictions
Rév. Père David Margaryan
Prêtre Paroissial





ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե.-

- **Ո՞վ հաստատած է բաղարջ հացով եւ անապակ գինիով պատարագելու այս Սրբազան Աւանդութիւնը:**

Հայկական սկզբնաղբիւրներու միաբերան վկայութեան համաձայն՝ անապակ գինիով եւ բաղարջ հացով պատարագելու Հայոց եկեղեցւոյ Սրբազան Աւանդութիւնը հաստատած է մեր հաւատքի Հայր Ս. Գրիգոր Լուսաւորիչը՝ վերցնելով Վաղ եկեղեցւոյ ծիսական կեանքէն: Այս մասին եկեղեցական մատենագիրները կը սկսին վկայել դարու վերջաւորութեան եւ Ը դարու սկիզբը՝ յորդորելով անխախտ պահել անապակ բաժակին Սրբազան Աւանդութիւնը, որմէ շեղումը ընկալուած է իբրեւ հեռացում ուղղափառութենէն: Այս հարցով Ս. Գրիգորը նկատի ունեցած է նաեւ հայերուա՝ գինի խմելու ազգային ավանդոյթը, քանի որ մենք երբեք ջուր չենք խառներ գինիին մէջ եւ վերջը խմել՝ ի տարբերութիւն ուրիշ ազգերու: Բնականաբար, անհասկնալի եւ անտրամաբանական կ'ըլլար առօրեայ կեանքին մէջ գինիին ջուր չխառնել եւ անապակ խմել, իսկ ծիսական կեանքին մէջ՝ խառնել: Այս հարցի պարագային եւս մէկ անգամ կը տեսնենք Ս. Գրիգորին խորագիտութիւնն ու մեր հոգեկերտուածքը հասկնալու անոր կարողութիւնը:

- **Ինչպե՞ս մեկնաբանուած է Տիրոջ կողմէ բխած արիւնը եւ ջուրը մեր եկեղեցւոյ մէջ:**

Ըստ Հայոց եկեղեցւոյ դիրքորոշման՝ Տիրոջ կողմէ բխած ջուրը խորհրդաբանօրէն Ս. Մկրտութեան նշանակն է, իսկ արիւնը՝ Ս. Հաղորդութեան: Նման մեկնաբանութեան կը հանդիպինք նաեւ Ընդհանրական եկեղեցւոյ հայրերու մօտ: Բացի այդ, մեր եկեղեցւոյ հայրերը կը վկայակոչեն մէկ այլ հիմնական պատճառ: Չէ՞ որ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատուած է նախքան խաչելութիւնը եւ ոչ թէ խաչելութենէն ետք: Ուստի ճիշդ չէ ջուր ավելցնել Ս. Հաղորդութեան բաժակին մէջ:

ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարածեցէք սերը ամենուրեք, ուր ալ գտնուիք, առաջին հերթին՝ սեփական տան մէջ:

Մայր Թերեզա

Եթէ կ'ուզէք իսկապէս հրաշքներ տեսնել, աղօթքի ժամանակ տրամադրեցէք:

Սատու Սունտար Սինկ

Եթէ քաջութիւն չկայ, յառաջդիմութիւն ալ չկայ: Քաջութիւնը այն է, երբ վստահութեամբ ամբողջապէս Աստուծոյ կը նուիրուիս: Ով քաջութիւն ունի, ան սեր ալ ունի եւ Աստուած հաշուի կ'առնէ անոր:

Վանական Պաիսիոս Աթոսացի

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

Calendrier des fêtes religieuses

Pour la Semaine Procahine

Յուլիս – Juillet

13, Երկուշաբթի – Ա օր Վարդավառի պահոց:

Lundi 13 – 1er jour du Jeûne de la Transfiguration.

14, Երեքշաբթի – Բ օր Վարդավառի պահոց:

Mardi 14 – 2ème jour du Jeûne de la Transfiguration.

15, Չորեքշաբթի – Գ օր Վարդավառի պահոց:

Mercredi 15 – 3ème jour du Jeûne de la Transfiguration.

16, Հինգշաբթի – Դ օր Վարդավառի պահոց:

Jeudi 16 – 4ème jour du Jeûne de la Transfiguration.

17, Ուրբաթ – Ե օր Վարդավառի պահոց:

Vendredi 17 – 5ème jour du Jeûne de la Transfiguration.

18, Շաբաթ – Յիշատակ Տապանակին հնոյ

եւ տօն Նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:

Samedi 18 – Commémoration de l'ancienne Arche

et Fête de la Sainte Église naissante.

ՀՈԳԵՀԱՆԳԱՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԿԻՐԱԿԻ, 12 Յուլիս 2020**



**Պրն. Կիւնտիւզ Զօչիյիթ
Պրն Սուրատ Զօչիյիթ**

**Տ. եւ Տիկ. Արա եւ Մարի Կերիբեաններ
Տ. եւ Տիկ. Արթօ եւ Ռուլա Աֆանան եւ զաւակները՝
Նիբօյ, Կրէկուար եւ Քրիսթօֆըր (Էտմընթըն)
Տ. եւ Տիկ. Պերճ եւ Անի Կերիբեաններ (Օթթաուա)
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Ռումինա Կերիբեաններ
եւ դուստրը՝ Չօուի**

հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
կնոջ, մօր, քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԺԱՆԵԹ

**ԱՖԱՆԱՆ-ԶՕՉՅԻՅԻԹԻ
(JANET AFACAN-KOCYIGIT)**

(մահացած Պոլիս)
Մահուան 40-ին առիթով:



**Տ. եւ Տիկ. Զեքթօր եւ Ժագլին Տօ Սանթօս
Տ. եւ Տիկ. Քրիսթիան եւ Շուշան Սապունճեան
Տ. եւ Տիկ. Ատրիան եւ Գարին Սապունճեան
Տ. եւ Տիկ. Արթիւր եւ Նէսսի Սապունճեան
Տ. եւ Տիկ. Ռոպէր եւ Մէրի Սանլեան
Տ. եւ Տիկ. Զայկ եւ Սեւան Մերճան**

Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
մօր, մեծ մօր եւ հարազատին՝

**ՊԵՐՃՈՒՅԻ ԻՉՄԻՐԼԵԱՆԻ
(BERCUHI IZMIRLIYAN)**

Մահուան 40-ին առիթով:



Տիկ. Ժերմեն Բեօլօղլու եւ գաւակը՝ Լեւոն
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ գաւկին եւ եղբօր՝
ՌԱՖՖԻ ԲԵՕԼՕՂԼՈՒԻ
(RAFFI KOLEGLU)

Մահուան 25-րդ տարելիցին առիթով:



Տ. եւ Տիկ. Նորայր եւ Չարա Չախալեան
եւ գաւակները՝ Անի եւ Նարեկ
Յոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
մօր եւ մեծ մօր՝

ՍԻՐԱՆՈՒՇ ԴԵՐԱԲԵՏԵԱՆԻ
(SIRANOUSH BERAKDJIAN)

(մահացած Յայաստան)
Յոգւոյն ի հանգիստ:



Տիկ. Մայրանուշ Օզօղլու
Տ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Արմինէ Շիրինեան
Տ. եւ Տիկ. Արման եւ Արաքսի Օզեան
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
ամուսնոյն եւ հօր՝

ՍԱՐԳԻՍ ՕՉՕՂԼՈՒԻ
(SARKIS OZOGLU)

Մահուան 44-րդ տարելիցին առիթով:
Ինչպէս նաեւ՝

ՕՉՕՂԼՈՒ, ԿԻԲԼԷՉԵԱՆ
ԵՒ ՓԱՌՈՒՆԱԿԵԱՆ

Գերդաստաններու համայն նկշտեցելոց
հոգիներուն ի հանգիստ



Սօնիա Պարոնեան եւ գաւակները՝
Ալեքսիա, Բէյվըն եւ Գարինա
Տ. եւ Տիկ. Տօմենիքօ եւ Նորա Բէմբիթէլի
եւ դուստրը՝ Կէմմա
Յոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ԳԵՈՐԳ ՊԱՐՈՆԵԱՆԻ
(KEVORK BARONIAN)**

Մահուան 10-րդ տարելիցին առիթով:

ԵՒ

**ԱՆԻ ՊԱՐՈՆԵԱՆԻ
(ANI BARONIAN)**

Մահուան 5-րդ տարելիցին առիթով:



**Տ. ԵՆ ՏԻԿ. ՕՆՆԻԿ ԵՆ ՄԱՐԻ ՓԻԱՖԵԱՆՆԵՐ
ԵՆ ընտանիքը**

Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
ծնողաց եւ մեծ ծնողաց՝

ԱՐՏԱՇԵՍ, ՍԻՐԱՆՈՒՇ

**ԵՒ ՄԻՅՐԱՆ ԶԵՕՐՅԱՃԵԱՆՆԵՐՈՒ
(ARDASHES, SIRANOUSHE,
& MIHRAN KEORHADJIAN)**

ՄԻՅՐԱՆ, ԱՐԱՔՍԻ

**ԵՒ ԿԱՐՊԻՍ ՇԱՅԻՆԵԱՆՆԵՐՈՒ
(MIHRAN, ARAXI, & GARBIS CHAHINIAN)**

Ինչպէս նաեւ՝

ԱՐՍԷՆ ԵՒ ՀՈՒՓՍԻՍԷ

**ՓԻԼԱՖԵԱՆՆԵՐՈՒ
(ARSEN & HERIPSIME PILAFIAN)**

Հոգիներուն ի հանգիստ:



ՏԻԿ. ՍՕՆԻԱ ԹՂՐՆԱՄԵԱՆ

Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ իր սիրեցեալ
մօր՝

ԱՏՐԻԱՆ

**ՊԱԼԻ ԹԸՐՆԱՄԵԱՆԻ
(ADRIANE BALI-TERNAMIAN)**

Մահուան 10-րդ տարելիցին առիթով:



ՏԻԿ. ԱՉԻԼ ԳԱԼՅԱՆԵԱՆ

ՏԻԿ. ԿՐԵԹԱ ԳԱԼՅԱՆԵԱՆ

Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ
ամուսնոյն եւ հօր՝

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ
(GARABED KALAYDJIAN)

Մահուան 20-րդ տարելիցին առիթով:



Օրդ. Լիլիան Քիւփէլեան
Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ իր սիրեցեալ
մօր՝

ՎԱՐԴՈՒՅԻ ՄԵԼՏՈՆԵԱՆԻ
(VARTOUSHI MELDONIAN)

Մահուան 3-րդ տարելիցին առիթով:



«Քանի որ մարմնաւոր մտածումը մահ է,
իսկ հոգեւոր մտածումը՝ կեանք ու խաղաղութիւն»
(Հռոմ. 8:6):

“The mind governed by the flesh is death,
but the mind governed by the Spirit is life and peace”
(Romans 8:6).

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 11 Յունիս 2020

Քրիստոսի 12 Առաքելներու եւ Ս. Պօղոս 13-րդ Առաքելի Յիշատակութեան Օր



Յիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքելները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետութեան առաջին տարածողներն էին, յարուցեալ Քրիստոսի վկաները:

«Եւ ան իր մօտ կանչելով տասներկու աշակերտներուն՝ անոնց իշխանութիւն տուաւ պիղծ դէներու վրայ՝ հանելու անոնք եւ բժշկելու ամէն ցաւ եւ ամէն հիւանդութիւն» (Մատթ. 10:1): Պետրոս, Անդրեաս, Յակոբոս, Յովհաննէս, Մատթէոս, Բարդղղոյիմէոս, Փիլիպոս, Թովմաս, Թադէոս, Յակոբոս (Ալփիան), Շմաւոն (Կանանացի) եւ Յուդա առաքելներն էին անոնք, որոնցմէ վերջինը եղաւ Յիսուսին մատնիչը: Հետագային 12 առաքելներու շարքին Յուդայի փոխարէն ընտրուեցաւ Մատաթիա առաքելալ: Հաւատարիմ Յարուցեալ Յիսուսի վերջին պատգամին, (տես Մատթ. 28:18-19) առաքելները Յիսուսի պատուիրանները քարոզեցին ու ուսուցանեցին տարբեր ազգերու, «մկրտեցին անոնց հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգիին անունով», այսպիսով դառնալով Քրիստոսի եկեղեցւոյ հիմնադիրները: Քրիստոսի պատուիրաններուն ամենամեծ քարոզիչներէն է Ս. Պօղոս առաքելալ, որուն Քրիստոնեայ եկեղեցին կը ճանչնայ իբրեւ 13-րդ առաքելալ: Առաքելներու գործունեութեան նուիրուած է Աստուածաշունչի «Գործք Առաքելոց»-ը: Ս. Պօղոս առաքելի քարոզչութեան, անձին ու գործունեութեան վաւերագիրեր են նաեւ՝ Պօղոս առաքելի թուղթերը, 14 նամակները՝ հասցեագրուած եկեղեցական համայնքներուն ու անհատ Քրիստոնեաներուն: Հայ Առաքելական եկեղեցին 12 առաքելներու եւ 13-րդ առաքելալ ճանչցուած Պօղոս առաքելի յիշատակը կը նշէ միասնաբար Վարդավառէն մէկ շաբաթ առաջ, Վարդավառի Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը: Հայ եկեղեցւոյ տօնացոյցին մէջ կան նաեւ՝ առաքելներու յիշատակութեան առանձին տօներ:

Կիրակի, 12 Յուլիս 2020

Բարեկենդան Վարդավառի Պահոց

Վարդավառի՝ Յիսուս Զրիստոսի Պայծառակերպութեան տօնին Նախորդող շաբաթապահքը Հայ Եկեղեցւոյ մէջ կը կոչուի Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը Նաւակատիք է, այսինքն՝ այդ օրը կը թոյլատրուի ձկնեղէն եւ կաթնեղէն օգտագործել:



Holidays

Saturday, July 11, 2020

Commemoration of Christ's twelve Apostles and thirteenth

Apostle - St. Paul

Twelve Apostles elected by Our Lord Jesus Christ, were Christ's disciples and first preachers of His doctrine, as well as the Incarnate Christ's witnesses.



"Jesus called his twelve disciples together and gave them authority to drive out devil spirits and to heal every disease and every sickness." (The Gospel according to Matthew 10:1).

These were the names of the twelve Apostles Simeon (called Peter), Andrew, James, John, Philip, Bartholomew, Thomas, Matthew, James son of Alphaeus, Thaddeus, Simon the Patriot and Judas Iscariot, who betrayed Jesus. Later instead of Judas Iscariot Apostle Matthias was chosen, who was added to the group of eleven apostles.

Remaining faithful to Incarnate Christ's last message the apostles went to all peoples everywhere and preached and taught the Commandments of Jesus, baptized them in the name of the Father, the Son and the Holy Spirit, thus becoming the founders of the Christ's Church. One of the greatest preachers of Christ's commandments is Apostle Paul, who is recognized by the Christian Church as the thirteenth Apostle.

The section of the Bible called "The Acts of the Apostles" is dedicated to the apostles' activity. And there are references on Apostle Paul's preaching, his person and his activity in his 14 letters addressed to the church communities, established by himself, and individual Christians.

Sunday, July 12, 2020

Eve of the Fast of Transfiguration

This is the Sunday preceding the week prior to the fasting period preceding the Feast of Our Lord Jesus Christ's Transfiguration called in the Armenian Apostolic Church Fast of Transfiguration lasting from Monday to Friday. Saturday, the last day of the fasting period, is the eve of the feast, which means on that day people can eat fish and dairy products.



ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of July have been received with great appreciation 2020

CHURCH:

Mrs. Adrine Aghazarian \$1000
Mr. & Mrs. Vahan Sekeryan \$50

HOKEHANKISD (REQUIEM SERVICES) IN MEMORY OF:

THE LATE SARKIS GURNAGUL:

Mrs. Anahid Gurnagul \$300
Mr. & Mrs. Herman & Karmen Minasyan \$100
Mr. Ovagim Gurnagul \$100
Mr. & Mrs. Norayr Gurnagul \$100
Mr. & Mrs. Raffi & Ani Minasyan \$60
Mr. & Mrs. Toros & Ayda Keskinbicak \$50
Mr. Nazaret Sahakian \$50
Mrs. Seta Saroyan \$50
Mr. & Mrs. Migirditch Sahakian \$50
Mr. Robert Kilavuz \$50
Mr. Garo Gurnagul \$20
Mr. Aram Dirhemciyan \$20

THE LATE ANI KALEMJIAN-MANOUKIAN:

Mr. Arto Manoukian \$100
Mrs. Sonia Kalemjian-Cimetier \$50

THE LATE JANET AFACAN KOCYIGIT:

Mr. & Mrs. Ara & Mary Gerikyan \$150
Mrs. Hilda Kepekci \$50
Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$40

THE LATE RAFFI KOLEOGLU:

Mr. & Mrs. Ara & Mary Gerikyan \$50
Mrs. Hilda Kepekci \$50

Ուշադրություն

Սեր սիրելի հասարակներուն

Եթէ ունիք հասցեի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխություն, հաճեցե՛ք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Եկեղեցւոյ Գրասենեակ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



Church Office



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Տօն Պայծառակերպութեան Յիսուս Քրիստոսի
Transfiguration de Notre Seigneur Jésus-Christ



Սուրբ Եւ Ամմահ Պատարագ

Պատարագիչ՝

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան

Բարեջան Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Կիրակի, 19 Յուլիս 2020

առաւօտեան ժամը 10:30-ին:

Sainte Messe

Célébration et l'homélie:

S.E. Mgr. Abgar Hovakimyan

Primat de Diocèse Arménienne du Canada

Dimanche, le 19 Juillet 2020 à 10h30

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-mail : stgregorychurch@gmail.com Web. Saintgregory.ca



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայստ, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the "Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2

